Եղիշե Չարենց

Հիմա հիշում եմ բոլոր...

Հիմա հիշում եմ բոլոր օրերս հին ու անցած,
Լուսազարդ ու թեավոր օրերս հին ու անցած:

Եվ թվում է, թե նոքա կարկաչելով պիտի գան
Մանուկների նման հուր օրերս հին ու անցած:

Բայց գալիս են նոքա լո՛ւռ, ու հոգնաբեկ, ու տխուր,
Անցորդների պես մոլոր օրերս հին ու անցած:

Պանդուխտների նման այն, որ հեռացել են վաղուց
Տուն են դառնում նորից նոր օրերս հին ու անցած:

Եվ նստում են, հոգնաբեկ, ահա սրտիս վրա ծեր
Ու հորանջում են տխուր օրերս հին ու անցած:

Եվ չեն կանչում ոչ-ոքի. մտորում են ու լռում.
Քո՛ւն են փնտրում ու անդորր օրերս հին ու անցած: